



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

հունվարի 2018 թվականի N°Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N°435Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ԻՆՎԵՍԹՄԸՆԹ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ (ԱՅ-ԷՄ-ՋԻ)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի նոյեմբերի 8-ի N°Ե-08/11-01 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «ԻՆՎԵՍԹՄԸՆԹ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ (ԱՅ-ԷՄ-ՋԻ)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արևել» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N°435Ա որոշման 2-րդ կետով հաստատված ԼԷ N°0597 լիցենզիայի պայմանների՝

- 1) 6-րդ կետում «434,72» թիվը փոխարինել «434,7» թվով,
- 2) 7-րդ կետում «1672» թիվը փոխարինել «1260» թվով, իսկ «0.26» թիվը՝ «0.345» թվով:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը տասներեք հազար երկու հարյուր հիսուն դրամ գումարի չափով ազատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված 2017

թվականի հուլիսի 27-ի №O.AB.100.11CB.ESC.4.2745.16 երաշխիքի համաձայն ստանձնած մեկ միլիոն հարյուր հազար դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԻՆՎԵՍՏՄԵՆՏ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ (ԱՅ-ԷՄ-ՋԻ)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
հունվարի 2018թ.
Ժամը 11⁰⁰

Ս. Աղիւնյան

Ս. Շահինյան

Գ. Բաղրամյան

Հ. Ղոսաւմյան

Ժ. Խաչատրյան